

**«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

“Հաստատում եմ՝”

Բուհի ռեկտոր

_____ Խաչատրյան Գ.Կ.

“ ___ ” _____ 2015թ.

ԿԱՐԳ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅԱՆ

Ընդունված է գիտական խորհրդի նիստում

Արձանագրություն թիվ _1____

“_30_” _____ 01_____ 2015թ.

Համալսարանը հետևում է ակադեմիական ազնվության սկզբունքներին և երաշխավորում, որ սովորողները տեղեկացված են՝ ինչ հետևանքների է հանգեցնում ակադեմիական ազնվության սկզբունքների խախտումը: Ակադեմիական ազնվության քաղաքականության համատեքստում սկզբունքայնությունը նշանակում է ազնվության և արդարության ընդգծված զգացում: Այն պետք է արտահայտվի սովորողների ակադեմիական աշխատանքներում, որոնցով վերհանվելու են նրանց կարողությունը և օգտագործված գրականությունից հղումներ անելու հմտությունը: Այս պահանջները չկատարելը հանգեցնում է տվյալ աշխատանքի խոտանմանը:

I. Ընդհանուր դրույթներ

Ակադեմիական ազնվությունը ենթադրում է աշխատանքի կատարում առանց արտագրության և առանց այլ սովորողների աշխատանքների՝ շահադիտական նպատակներով կիրառման: Այն դեպքերում, երբ հեղինակը օգտագործում է ուրիշի խոսքերը, աշխատանքները, մտահղացումները, նա պարտավոր է հիշատակել դրանք ծանոթագրությամբ՝ նշելով մատենագիտական տվյալները (աշխատության հեղինակին և վերնագիրը, հրատարակության տարեթիվը, էջը): Ուրիշի աշխատությունը միայն օգտագործված գրականության ցանկում նշելը բավարար չէ: Սրանք հիմնական դրույթներ են որակյալ աշխատանքի համար: Սույն կարգը կոչված է համալսարանում որոշակի կանոններ հաստատելու՝ աշխատակիցների և սովորողների միջավայրում ակադեմիական ազնվությունը պահպանելու և գրագողությունը կանխարգելելու համար:

II. Ակադեմիական ազնվություն

1. Ակադեմիական ազնվություն է համարվում՝

ա/ քննական աշխատանքների անցկացման ընթացքում ազնիվ և պատշաճ պահվածքը,

բ/ գիտական և գիտահետազոտական աշխատանքներում տվյալ մտքի, գաղափարի իրական հեղինակի նշումը,

զ/ իրական (ոչ կեղծ) հետազոտական արդյունքնրով հիմնավորված աշխատանքի ստեղծումը,

դ/ մտավոր սեփականության բոլոր տեսակների պաշտպանությունը:

2. Ուսանողները պետք է գիտակցեն իրենց հանձնարարված աշխատանքի ինքնուրույն կատարման պատասխանատվությունը և խստորեն հետևեն կարգապահական կանոններին և հրահանգներին քննության ընթացքում և տարաբնույթ առաջադրանքներ կատարելիս: Մասնավորապես՝ պետք է տեղեկացված լինեն, թե որ տիպի աշխատանքն է թիմային և որը՝ ինքնուրույն:

3. Աշխատանքի ղեկավարը և կամ գիտելիքների ստուգումն անցկացնող դասախոսը իր հերթին ներկայացնում է գործընթացի համար անհրաժեշտ կանոններ և հրահանգներ յուրաքանչյուր առաջադրանքի համար և ուսանողների ուշադրությունը հրավիրում այն փաստին, որ դրանց պահանջների չկատարումը ակադեմիական ազնվության սկզբունքների խախտում է:

III. Ակադեմիական անազնվություն և աշխատանքների անբարեխիղճ

կատարում

4. Ակադեմիական անազնվություն է համարվում՝

ա/ *գրագործությունը*՝ այլոց գաղափարները, հետազոտությունները և մտավոր աշխատանքները սեփականացնելը և որպես ինքնուրույն աշխատանք ներկայացնելը,

բ/ *համաձայնությունը*՝ աշխատանքի անբարեխիղճ կատարմանը աջակցելը,

գ/ *բազմապատճենումը*՝ նույն աշխատանքը գնահատման տարբեր համակարգերում և / կամ տարբեր վերնագրերով ներկայացնելը,

դ/ *ցանկացած այլ գործողություն*, որը անարդարացի առավելություն է տալիս աշխատակցին կամ ուսանողին և ազդում նրա արձանագրած արդյունքների վրա, ինչպիսիք են, օրինակ, քննության ժամանակ արգելված նյութերի օգտագործումը, գնահատման արդյունքների, ստորագրությունների կեղծումը :

5. Ակադեմիկան անագնվության հիմնական դրսևորումները գրագողությունն ու համաձայնությունն են: Բայց կարող են լինել նախատեսված չափանիշների այլ խախտումներ ևս:

6. Խախտումների օրինակներ

6.1. Գրագողություն

ա/ այլ հեղինակների գաղափարների, հետազոտությունների ուսումնասիրությունների և մտավոր աշխատանքների մասնակի կամ ամբողջական յուրացումը,

բ/ որևէ աշխատանքի՝ առանց իրական հեղինակին և աղբյուրը նշելու մասնակի կամ ամբողջական ընդօրինակումը այլևայլ աղբյուրներից, ինչպիսիք են՝ համացանցը, հոդվածները, գրքերը, ամսագրերը և այլն,

գ/ օգտագործված գրականության ցանկի՝ ակնհայտ խախտումներով ձևավորումը:

6.2. Համաձայնություն

- Թեստային աշխատանքի, քննության կամ այլ տիպի ստուգողական աշխատանքների (ակնարկ, ռեֆերատ, լաբարատոր աշխատանք և այլն)՝ ուրիշի փոխարեն կատարումը կամ ուրիշի աշխատանքի հանձնումը սեփականի փոխարեն:

6.3. Բազմապատճենում

Միևնույն աշխատանքի շնորհանդեսը տարբեր տիպի գնահատումների համար, այդ թվում՝ որևէ աշխատանքի, որը երբևէ արդեն գնահատված կամ ներկայացված է եղել, մասնակի կամ ամբողջական կրկնությունը (այդ թվում՝ եթե այն հենց հեղինակին է և գրագողություն չի ենթադրում):

6.4. Կեղծում

ա/ Գնահատականների կամ պատասխանների կեղծում՝ այլ գնահատական ստանալու նպատակով,

բ/ ակադեմիական գրառումների և կամ այլ փաստաթղթերի կեղծում՝ ակադեմիական շահույթ ստանալու նպատակով (օրինակ՝ ՄՈԳ-ի բարձրացում),

գ/ այլ սովորողի ստորագրության կամ ակադեմիական աշխատանքի կեղծում,

դ/ այլ սովորողի ակադեմիական աշխատանքի վնասում:

6.5. Այլ խախտումներ

ա/ արգելված նյութերի կամ էլետրոնային հարմարանքների կիրառում գիտելիքների ստուգման ընթացքում,

բ/ քննության ժամանակ քննական հարցերի պատասխանների տրամադրում այլ ուսանողների,

7. Որակի ապահովման և ակադեմիական ազնվության չափանիշները խախտողները պատասխանատվության են ենթարկվում :

Մ ա կ.	օրինակներ	պատասխանատուներ	Տույժի միջոցներ
1.	Գրագողություն-կրկնօրինակում	դասախոս	Աշխատանքի վերահանձնում. Եթե սովորողը չի վերահանձնել աշխատանքը, ապա այն գրոյացվում է:
2.	Ինֆորմացիայի անազնիվ օգտագործում, հեղինակային իրավունքների խախտում, որոնք արձանագրված են եղել աշխատանքները գրելիս	դասախոս և խորհրդատու	աշխատանքի գրոյացում
3.	կեղծարարություն	ամբիոնների վարիչներ, դեկաններ	Աշխատանքի գրոյացում և պաշտոնական զգուշացում
4.	Քննական նյութերի գողություն	բուհի ռեկտոր	Ազատում բուհից